ՄԵԾ ՀԱՅՔԻ ՄՈԿՔ ԱՇԽԱՐՀՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑԻ»

Բ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մոկքը եղել է Մեծ Հայքի ամենափոքր աշխարհը։ «Աշխարհացույցի» տվյալների համաձայն վարչականորեն 9 գավառների բաժանված նրա տարածքը զգալի չափով զիջում էր Մեծ Հայքի առավել մեծ գավառների տարածքին[1]։ «Աշխարհացույցի» քննությունը համոզիչ ցույց է տալիս, որ ի տարբերություն Մեծ Հայքի մյուս աշխարհների, Մոկքի վարչական ձևավորումը տեղի ունեցավ անհամեմատ ուշ, ամենայն հավանականությամբ III դարից ոչ շուտ։ Մոկքը չի հիշատակվում Կլավդիոս Պտղոմեոսի՝ Մեծ Հայքի նկարագրության մեջ, որը մեր կարծիքով խոսում է նրա, որպես աշխարհի, դեռևս չձևավորված լինելու մասին մ. թ. II դարի կեսերին[2]։ Համաձայն VI դարի բյուզանդական պատմագիր Պետրոս Պատրիկիոսի հաղորդած տեղեկությունների, Հռոմը Մծբնի 298 թ. քառասնամյա հաշտության պայմանագրով Պարսկաստանից, ի թիվս այլ երկրամասերի, ստացավ 5 նահանգներ՝ Անգեղտունը, Մոկքը, Աղձնիքը, Կորդուքը և Մավդեքը[3], որոնք, հանդիսանալով հայկական երկրամասեր, III դարում միացվել էին Սասանյան Պարսկաստանին, հավանաբար հայոց Խոսրով II թագավորի եղերական սպանությունից հետո։ Դատելով Մծբնի պայմանագրի բովանդակությունից, իրավաքաղաքական այդ վիճակը ճանաչվել էր ոչ միայն Մեծ Հայքի պարսից ազդեցության ոլորտում գտնվող արքունիքի, այլև հռոմեացիների կողմից, որովհետև 297 թ. հայ-հռոմեական զորքերի պարսից դեմ տարած հաղթանակից հետո, երբ վերականգնվեցին հայկական թագավորության սահմանները, Մծբնի բանակցություններում նրանք վերոհիշյալ երկրամասերը Մեծ Հայքի թագավորության մասեր չէին դիտում[4]։ Մծբնի հաշտության պայմանագրի կնքումից շատ չանցած, Հռոմը անդրտիգրիսյան[5] այդ 5 երկրամասերը հանձնեց Մեծ Հայքի թագավորությանը[6], որոնց պատկանելությունը Մեծ Հայքի թագավորությանը հարցականի տակ դրվեց միայն 65 տարի անց, 363 թ. «ամոթալի հաշտությամբ», որը կնքվեց Հռոմի և Պարսկաստանի միջև Հուլիանոս կայսեր դեպի Տիզբոն կատարած անհաջող արշավանքից հետո։ Հաղթանակած պարսից արքա Շապուհ II-ը հաշտությամբ ստացավ Աղձնիքը, Մոկքը, Մավդեքը, Ռեհիմենեն և Կորդուքը[7]։ Ամիանոս Մարկելինոսի պատմությունը գործն այնպես է մատուցում, որ և՛ 298, և՛ 363 թվականներին

---

1 *Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 116—120։*

2 Claudii Ptolemaei Geographia, e codicibus, recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxid Carolus Müllerus. Voluminis primi, pars secunda Parisiis, 1901, p. 931—951.

3 Petrus Patricius. Fragm. 14 (Dindori, Historici graeci minovis, I, *էջ 443*)։

4 *Բ. Հարությունյան. Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչաքաղաքական կացությունը III դարի վերջին և IV դարի սկզբին.—«Բանբեր Երևանի համալսարանի», 1982, № 2, էջ 82—83։*

5 *Անվանումը ճիշտ է մասամբ, որովհետև Մավդեքը գտնվում էր Տիգրիսի աջ ափին։*

6 *Բ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 80—81։*

7 Аммиан Марцеллин. История, перевод с латинского проф. Ю. А. Кулаковского. Вып. II, Киев, 1907. XXV, 7, 9:

խոսքը գնացել է միևնույն երկրամասի մասին[8]։ Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Ն. Ադոնցը, Սասանյան Պարսկաստանը 363 թ. վերադարձրել էր 298 թ. կորցրած 5 երկրամասերից միայն 3-ը՝ Աղձնիքը, Կորդուքը և Ծավդեքը։ Նշանավոր հայագետի կարծիքով Անգեղտունը և Ծոփքը մնացել էին հռոմեացիներին[9]։ Դժվար է հաստատապես ասել, թե վերջին երկու նահանգները անցե՞լ էին Հռոմին, թե՞ ոչ, քանի որ ոչ միայն Ամիանոսի պատմությունը, այլև մյուս սկզբնաղբյուրները ոչինչ չեն հայտնում այդ մասին։ Սակայն մի բան պարզ է, որ նրանց փոխարեն Հռոմը պարսիկներին զիջեց հայկական երկու այլ երկրամասեր՝ Մոկքը և Ռեհիմենեն։ Կ. Գյուտերբոկը, Հ. Հյուբշմանը, Ն. Ադոնցը և Հ. Մանանդյանը այն կարծիքն են հայտնել, ւր 298 թ. հռոմեացիները ստացել էին ոչ թե 5, այլ 7 երկրամասեր, որոնցից ւոսկ 5-ն էին 363 թ. վերադարձրել պարսիկներին[10]։ Ըստ որում Ն. Ադոնցի եզրակացությամբ Մոկքը հանդիսացել է Աղձնիքի, իսկ Ռեհիմենեն՝ Ծավդեքի բաղկացուցիչ մասը, ուստի 298 թ. նրանք զիջվել էին պարսիկներին Աղձնիքի և Ծավդեքի կազմում[11]։ Մի կողմ թողնելով Ռեհիմենեի հարցը, որ անմիջականորեն չի առնչվում Մոկքի հետ, և նկատի ունենալով «Աշխարհացույցի» տվյալները, մենք մեծավաստակ հայագետի եզրակացությունը ընդունում ենք կիսով չափ։ Ամենայն հավանականությամբ Մոկքը հանդիսացել է Աղձնիքի մաս, սակայն 298 թ. Մծբնի պայմանագրով այն չի անցել Հռոմին։ Մեր կարծիքով այդ եզրակացության օգտին վկայում է «Աշխարհացույցի» «հինգերորդ՝ Մոգք որ առ Ասորեստանեաւ»[12] արտահայտությունը։ Պատմական աշխարհագրության մասնագետների և մասնավորապես ակադ. Ս. Տ. Երեմյանի կողմից հիմնականում ճշտված են Մոկաց աշխարհի սահմանները, որոնք մեծ առարկություններ չեն հարուցում։ Համաձայն այդ տեղադրության Մոկքը զբաղեցնում էր Ջերմ (ներկայումս՝ Բոհտանսու) գետի ավազանի միջին մասը և գտնվում էր Մեծ Հայքի հարավային սահմանագլխից շուրջ 70—80 կմ հյուսիս[13]։ Բնականաբար նման տեղադրությունը անհարիր է դարձնում «Աշխարհացույցի» վերոհիշյալ տեղեկությունը, ըստ որի Մոկքը սահմանակից է եղել Ասորեստանին։ Հետևաբար պետք է ենթադրել, որ Մոկքի վերաբերյալ աշխարհացույցյան տեղեկությունը արդյունք է որոշակի քաղաքական կացության, երբ մինչև Մոկք ընկած տարածքը նվաճվել էր Հայկական թագավորությունից հարավային հարևանի՝ Պարսկաստանի կողմից և միակցվել Ասորեստանի վարչական շրջանին։ Ի՞նչ կարող էր այդ վիճակը ստեղծվել։ IV դարի քաղաքական կացությունը, որ մեզ քաջ հայտնի է սկզբնաղբյուրներից, բացառում է դրա հնարավորությունը հիշյալ շրջանում։ Եղիշեի պատմությունը, որ արժեքավոր տեղեկություններ է պահպանել V դարի վարչաքաղաքական կացության վերաբերյալ և արձանագրում է երբեմնի Մեծ Հայքի թագավորության տարածքի հարավում մի շարք վարչական շրջաններ՝ Կորդուքը, Դասնը, Ծավդեքը և Արզնարզյունը, որոնք չէին մտնում Ասորեստանի վարչական շրջանի մեջ, նույնպես անհնարին է դարձ-

---

8 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 43.

9 Նույն տեղում, էջ 43։

10 Կ. Գյուտերբոկ. Հռովմեական Հայաստան և հռովմեական սատրապությունները Դ—Զ դարերում. թարգմ. Մ. Նորշուանի. Վիեննա, 1914, էջ 7—8։ Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղաց անունները. թարգմ. Բ. Պիլեղիկեյան. Վիեննա, 1907, էջ 30—31։ Н. Адонц. Указ. соч., с. 43; Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 111, 177։

11 Н. Адонц. Указ. соч., с. 43.

12 Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց. Վենետիկ, 1881, էջ 29։

13 Ս. Տ. Երեմյան. Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298—385 թթ.), քարտեզ, մասշտաբ 1 : 1250000, Երևան, 1979, Դ—5, Դ—5։

նում այդ վիճակի վերագրելը V դարին[14]։ Իսկ այդպիսի կացություն գոյություն է ունեցել III դարում, ինչպես ցույց է տալիս Մծբնի պայմանագրի քննությունը։ Սասանյան Պարսկաստանը, ձգտելով իր քաղաքական սահմանները հասցնել մինչև Հայկական Տավրոսի ջրբաժան գիծը և տիրանալ Արքայական ճանապարհի Մեծ Հայքի տարածքով անցնող հատվածին, նվաճեց Անգեղտունը, Ծոփքը, Աղձնիքը և Կորդուքը։ «Աշխարհացույցի» տվյալները ցույց են տալիս, որ Խոսրով II-ի սպանությունից առաջ Ծավդեքը չի մտել Մեծ Հայքի թագավորության մեջ և նրա պետական սահմանը անցել է Տիգրիս գետով։ Կորցնելով իր հարավային, կարևոր ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող երկրամասերը, Մեծ Հայքի թագավորությունն էլ, գտնվելով հանդերձ Սասանյան Պարսկաստանի քաղաքական ազդեցության ոլորտում, փորձել է իր համար ապահովել քիչ թե շատ հուսալի սահմաններ հարավում, իր ձեռքը վերցնելով կարևոր լեռնանցքների վերահսկողությունը։ Մեծ Հայքի վարչական բաժանումը, որի համաձայն Հայկական Տավրոսի հարավային լանջերին գտնվող մի շարք գավառներ և ձորահովիտներ վարչականորեն մտնում էին Հայկական Տավրոսից հյուսիս գտնվող աշխարհների մեջ, ցույց է տալիս, որ հայոց արքունիքը բանակցությունների ժամանակ կարողացել է իր վերահսկողության ներքո պահել կարևոր լեռնանցքից դեպի հարավ ընկած գավառներն ու գավառակները։ Աղձնիք աշխարհը, որ III դարում տարածվում էր մինչև Վասպուրականի հարավ-արևմտյան սահմանագլուխը, կամ որ ավելի ճիշտ է՝ Տոսպք աշխարհի արևմտակողմը, ամբողջությամբ Պարսկաստանին միացնելու դեպքում խիստ կթուլացներ Մեծ Հայքի թագավորության սահմանը Վանա լճի շրջանում, ուստի հայոց արքունիքը աշխատել է և կարողացել է իր վերահսկողության ներքո պահել նրա արևելյան հատվածը, որը և այդ քաղաքական ակտի հետևանքով ձևավորվել է որպես առանձին աշխարհ։ Իհարկե, տեսականորեն կարելի է ենթադրել, որ Մոկքը կարող էր հանդիսանալ նաև Տոսպք-Վասպուրականի մաս, սակայն այդ դեպքում նրա որպես աշխարհի ձևավորումը հնարավոր կլիներ 363 թ. հետո, հանգամանք, որը հակասում է սկզբնաղբյուրների տեղեկություններին, որովհետև Ամիանոս Մարկելինոսի վկայությունները խոսում են նրա 363 թ. առաջ որպես վարչական առանձին միավորի ձևավորման մասին[10]։ «Աշխարհացույցի» ընդարձակ խմբագրության մեջ Մոկքի մասին ասված է. «Ե. Աշխարհ Մոկք, յելից կան Աղձնեաց, ի լերինն Տորոս[16]։ Ունի գաւառս ինն, զԻշայր, (զմիւս Իշայր)[17], զԻշուց գաւառն, զԱռվենէից ձոր, զՎիջաց[18], զԱռանձնական Մոկաց գաւառն, յորում գետն Որբ, զԱրքայից գաւառ, զԱրգովտեաց ովիտ[19], Ջերմաձոր, յորում գետն Մերմ[20]։ Ունի ի մրրգաց զարշատ եւ մանրագոր. եւ ի գազանաց՝ ինձ գեղեցկախայտ»[21]։ «Աշ-

14 Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան. Երևան, 1957, էջ 10։

15 Аммиан. Марцеллин, XXIII, 2. 5:

16 Ըստ երևույթին «Տորոս» գրությունը գրիչը սխալմամբ արտագրել է «Տորոս»։

17 «Աշխարհացույցի» համառոտ խմբագրությունը Ա. Սուքրյանին իրավունք է տվել ավելացնելու «զմիւս Իշայր» գավառը։

18 Ամենայն հավանականությամբ «Աշխարհացույց»-ի համառոտ խմբագրությունը պահպանել է «Միշա» ճիշտ ձևը, քանի որ Մոկքի տարածքում մինչև այսօր պահպանվել է Միշա գյուղը։

19 Հանդիպում է նաև Արգաստովիտ, Ագաստեայ ովիտ, Ջարղարեաց ովիտ և այլ ձևերով, որոնցից թերևս առավելություն պետք է տալ «Արգաստովիտ» գրությանը։

20 Անկասկած գետի անունը Ջերմ է և այն պահպանվել է գավառանվան մեջ։ Ջերմ գետը հիշատակվում է Գլինիոսի (Zerbis), բյուզանդական հեղինակների (Ζίρμας), արաբ պատմագիրների երկերում (Wadi az-Zarm)։ Տե՛ս Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 78։

21 Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, էջ 32։

խարհացոյցի» համառոտ խմբագրությունը էապես չի տարբերվում ընդարձակից, բայց և այնպես մենք ավելորդ չենք համարում մեջբերել այն. «Հինգերորդ՝ Մոկք յելից կալով Աղձնեաց. յամուրս Տաւրոս լերինն։ Գաւառս ունի ինն. զԻշայր, զԻշայր միւս[22] և զԻշոց[23] գաւառ, զԱռուենից ձոր, զՄիջա, զԱռանձնակ Մոկս, զԱրքայից գաւառ, զԱգաստեայ ովիտ[24], զՋերմաձոր։ Եւ ունի ի մրգոց արշակ[25] եւ մանրագոր եւ ի գազանաց ինձ[26] գեղեցկախայտոց եւ[27] հաւուց՝ կաքաւս»[28]։ Կարծում ենք, որ հաշվի առնելով «Աշխարհացոյցի» ձեռագրերի տվյալները, մենք կարող ենք վերականգնել Մոկքի նկարագրությունը հետևյալ տեսքով. «Ե. Աշխարհ Մոկք. յելից կան Աղձնեաց, ի լերինն Տաւրոս։ Ունի գաւառս ինն. զԻշայր, զՄիւս Իշայր, զԻշոց գաւառն, զԱռուենից ձոր, զՄիջա, զԱռանձնական Մոկաց գաւառն, յորում գետն Որբ, զԱրքայից գաւառ, զԱրգաստեաց ովիտ, զՋերմաձոր, յորում գետն Ջերմ։ Ունի ի մրգոց զահրշակ եւ զմանրագոր. եւ ի գազանաց զինձ գեղեցկախայտ ե ի հաւուց՝ զկաքաւս»։ «Աշխարհացոյցի» լավագույն գիտակներից մեկը՝ Ս. Տ. Երեմյանը Մոկքի նկարագրության մեջ կատարել է սրբագրություն. «զԱռանձնական Մոկաց գաւառն, յորում գետն Որբ, զԱրքայից գաւառ» արտահայտությունը վերածելով «զԱռանձնական Մոկաց գաւառն, [որ է] Արքայից գաւառ, յորում գետն Որբ», որի հետևանքով Մոկքի գավառների թիվը կրճատվել է մեկով։ Հեղինակը իր սրբագրությունը փորձում է հիմնավորել նրանով, որ իբր այս գավառը «արքունական» է եղել դեռևս մ. թ. ա. IX—VIII դդ., երբ այն Խուբուշկիա փոքրիկ թագավորության կենտրոնն էր[29]։ Հազիվ թե հիմնավոր կարելի է համարել այս տեսակետը, որովհետև Խուբուշկիայի պես փոքրիկ թագավորությունները Հայկական լեռնաշխարհում նշանակալից թիվ էին կազմում, սակայն նմանանուն գավառների ծագման պատճառ չեն դարձել։ Այսուհանդերձ, քանի որ վերոհիշյալ սրբագրության հետևանքով հակասություն է առաջացել բնագրի «Ունի գաւառս ինն» արտահայտության և թվարկված գավառների քանակի միջև, Ս. Տ. Երեմյանը բնագրում կատարել է երկրորդ փոփոխությունը՝ «Ունի գաւառս ինն» արտահայտությունը վերածելով «Ունի գաւառս ութ»-ի[30]։ Հպանցիկ քննությունն անգամ ցույց է տալիս, որ երկու սրբագրությունն էլ ոչնչով պատճառաբանված և հիմնավորված չեն։ Հարկ է նշել, որ Մոկաց Առանձնական գավառը Արքայից գավառին նույնացնելուն խանգարում է այն հանգամանքը, որ բնագրում այդ գավառանունները իրարից բաժանվում են «յորում գետն Որբ» արտահայտությամբ։ Այնուհետև, մեր կարծիքով, Արքայից գավառի անունն անգամ խոսում է նրա արքունական տիրույթ լինելու օգտին, այն դեպքում, երբ Մոկաց Առանձնական գավառը կամ Առանձնակ Մոկքը հանդիսացել է Մոկաց իշխանության կենտրոնական կամ իշխանանիստ գավառը, հետևաբար նրանց նույնացումը խոցելի է, կամ որ ավելի ճիշտ է, անհնարին է նաև այլ տեսանկյուններից։ Եվ վերջապես ոչ մի իրավունք չունենք առանց ձեռագրային պատշաճ հիմնավորման գավառների քանակը 9-ից իջեցնելու 8-ի, քանի որ «Աշխարհացոյցի» ոչ մի ձեռագիր այդպիսի տեղեկություն չի պահպանել։

---

22 Հանդիպում է նաև «զմիւս Իշայր» ձևով։

23 Հանդիպում է նաև «Իշոց գաւառ» գրությամբ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերում։

24 Ըստ երևույթին ճիշտ ձևը եղել է «Արգաստեայ ովիտ»։

25 Մրգի անունը հիշատակվում է նաև «հրշակ» և «զահրշակ» գրությամբ։

26 Բացակայում է «զ» նախդիրը։

27 Բացակայում է «ի» նախդիրը։

28 Ա. Գ. Արրահամյան. Անանիա Շիրակացու մատենագրությունը. Երևան, 1944, էջ 349։

29 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 71։

30 Նույն տեղում, էջ 108։

Փորձենք այժմ տեղագրել Մոկաց աշխարհի գավառները, որ բավականին դժվարություն է ներկայացնում։ Հստակ տեղագրություն ունեն նրանցից 3-ը կամ լավագույն դեպքում՝ 4-ը։ Մոկք Առանձնակ գավառը գտնվել է Որբ կամ Մոկս գետի հովտում (այժմ՝ Մոկսսու կամ Մուկուսսու), որտեղ մինչև այժմ էլ գոյություն ունի Մոկաց նախարարության կենտրոն Մոկս (այժմ՝ Մուկուս) ավանը[31]։ Ղ. Ինճիճյանը Առուանից ձոր գավառը տեղագրում էր Մոկսից հարավ-արևմուտք 6 ժամ հեռավորության վրա գտնվող ձորահովտում, որը կոչվում է Առվանից ձոր Առվանց գյուղի անունով[32]։ Այդ պատճառով նա Թովմա Արծրունու «...դարձեալ գայ (Գագիկ Արծրունին) ի գաւառն անուանեալն Երիւարկ, առնու եւ անդ զբերդն Պաղայ եւ զՓարհուաց. գայ եւ ի ձորն Առուանից, առնու եւ զայն եւս ամրոցն, եւ տիրէ գաւառացն»[33] տեղեկությունը համարում է վրիպակ[34]։ Այս տեսակետը հետագայում պաշտպանել են Ղ. Ալիշանը[35], Հ. Հյուրշմանը[36] և Լեոն[37]։ Մի որոշ ժամանակ այդ տեսակետը պաշտպանել է նաև Ս. Տ. Երեմյանը, որի հետևանքով գավառը նրա «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» աշխատության քարտեզում տեղադրվել է նույն շրջանում[38]։ Սակայն, երբ արդեն քարտեզը հրատարակված էր, նա ճշտել է գավառի տեղադրությունը, որի համաձայն Առուենից ձորը գտնվել է Մոկքի ծայր հյուսիս-արևմուտքում՝ Երևարք և Ռշտունիք գավառների միջև, Օրանսդարասի կոչվող ձորահովտում[39]։ Այս տեսակետը, որ մենք անվերապահորեն ընդունում ենք, հաստատվում է ոչ միայն Մոկքի գավառների թվարկման աշխարհագրական հաջորդականությամբ, այլև մատենագիտական տվյալներով։ Բացի վերը բերված վկայությունից, դրա օգտին է խոսում նաև Թովմա Արծրունու մեկ այլ վկայությունը. «...փութանակի նկն նոյս ժիրաք ի գաւառն Ռշտունեաց եւ զզօրսն առխթեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց. եւ անդ գտեալ զբնակիչսն Ռշտունեաց, թափառականս անկեալ յանողորմ եւ ի մարդախողող շանցն գիշակերաց»[40]։ Բնական է, որ Առուանից կամ Առուենից ձորը պետք է գտնվեր Ռշտունիքի և Երևարքի հարևանությամբ, իսկ այդ հնարավոր է միայն Օրանսդարասի կոչվող ձորահովտում, որը պահպանել է գավառի հին անունը։ Մեր կարծիքով Առուանց գյուղը, որը պետք է հանդիսանար գավառի կենտրոնը, ժամանակի ընթացքում, ամենայն հավանականությամբ տեղական բարբառի ազդեցությամբ սկսել է արտասանվել Ավռանց (Աւրանց կամ Աւռանց), որն էլ ավելի ուշ վերածվել է Օրանցի, Օռանցի կամ Ուրանցի[41], իսկ դրանից հետո էլ քրդական ազդեցության ներքո Օրանիսի կամ Օրանսի, որից էլ

---

31 Ղ. Ինճիճյան. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Առաջին, Ասիա, հատոր Ա, Հայաստան (այսուհետև Նոր Հայաստան). Վենետիկ, 1806, էջ 160—162։ Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց. Վենետիկ, Ս. Ղազար, 1855, էջ 23, 54։ Լեո. Հայոց պատմություն. առաջին հատոր (Հին պատմություն), տե՛ս Լեո, Երկերի ժողովածու հ. Ա, Երևան, 1966, էջ 154։ Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 71։

32 Ղ. Ինճիճյան. Նոր Հայաստան, էջ 162։

33 Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ. Կոստանդնուպոլիս, 1852, էջ 314—315։

34 Ղ. Ինճիճյան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց. Վենետիկ, 1822, էջ 134։

35 Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23։

36 Հ. Հյուրշման. Նշվ. աշխ., էջ 307։

37 Լեո. Հայոց պատմություն, հ. Ա, էջ 154։

38 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, քարտեզ։ Հեղինակը սխալվում է, երբ Առվանից ձորի տեղադրությունը Առվանց գյուղի շրջանում վերագրում է Հ. Հյուրշմանին։ Իրականում Հ. Հյուրշմանը նշում է, որ ինքն էլ հետևել է Ղ. Ինճիճյանի տեղադրությանը։

39 Նույն տեղում, էջ 37—38։

40 Թովմա Արծրունի, էջ 142։

41 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 38։

առաջացել է ձորահովտի ուշ շրջանի Օրանսդարատի (նախահեղափոխական շրջանի ռուսական քարտեզներում և արդի մեծ մասշտաբի ռազմական քարտեզներում Оранс-дараси կամ Оранис-дараси) անվանումը։

Մեծ ճշտությամբ տեղադրվում է նաև Ջերմաձոր գավառը, չնայած արտահայտված իրարամերժ կարծիքներին։ Ղ. Ալիշանը կարծում էր, որ այն համապատասխանում է Շատախին[42]։ Հ. Հյուբշմանը, հենվելով Հարտմանի և Հոֆմանի աշխատությունների, ինչպես նաև Վյունշի աշխարհացույցի վրա, ենթադրել է այն Ջերմ (այժմ Բոհտանսու) գետի հովտում, սկսյալ Շատախից մի փոքր արևմուտք։ Ջերմաձորի տեղադրության համար կարևոր հենակետ է ծառայում այնտեղ հիշատակվող Զռայլ կամ Զռել բերդի դիրքը, որի ավերակները մինչև այսօր էլ պահպանվել են Զռելկալասի անունով[43]։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Զռայլ կամ Զռել բերդը կլիմայական տեսակետից հանդիսացել է սահմանաբաժան Արևելյան Տիգրիսի բարեխառն և ջերմ բնակլիմայական պայմաններ ունեցող հատվածների միջև, որի հետևանքով ամրոցից արևմուտք սկսվում է ճոխ բուսականության գոտին, Հ. Հյուբշմանը Ջերմաձորը տեղագրել է Զռել ամրոցից արևմուտք ընկած հատվածում[44]։ Ս. Տ. Երեմյանը ավելի է նյութականացրել նրա սահմանները՝ սկսելով այն Զռայլ բերդի շրջանից և հասցնելով մինչև Ջերմ և Կեծան գետերի ջրկիցը[45]։ Նման տեսակետը պայմանավորված է այն հանգամանքով, որ նա Աղձնիքի Երխեթք և Կեթիկ գավառները փորձել է տեղագրել Կեծան (ներկայումս՝ սխալմամբ Մուկուսչայ) գետի ավազանում։ Այդ տեղադրությունները աշխարհագրական տեսակետից հավանական չեն, ուստի, հիշյալ գավառների ենթադրյալ տարածքները, ինչպես կհամոզվենք ստորև, պետք է մտնեին Մոկքի մեջ, որի հետևանքով Ջերմաձորի արևմտյան սահմանները պետք է ենթադրել Կեծանի և Ջերմի ջրկիցից շուրջ 20 կմ արևմուտք։ Հարկ է նշել նաև, որ անհավանական է հեղինակի կողմից գավառի հյուսիսային սահմանը Ջերմ և Մոկս գետերի ջրկիցից հետո Ջերմ գետով անցկացնելը[46]։ Անկասկած է, որ գավառը պետք է զբաղեցներ Ջերմ գետի[47] ավազանի և՛ հյուսիսային, և՛ հարավային հատվածները։ Ջերմաձոր գավառը աղբյուրներում հիշատակվում է հաճախակի և այդ տեղեկությունները լոկ իրար լրացնում են և հաստատում Հ. Հյուբշմանի և Ս. Տ. Երեմյանի տեղադրությունը։ Այսպես, խոսելով Վարդան Մամիկոնյանի Մոկքում գտնվելու մասին, Թովմա Արծրունին հայտնում է, որ նա «...խոյս տուեալ գնաց զկողմամբքն Մոկաց, ի խոխոմս Տորոսական լերինն, ի լեսուրս Ջերմաձորոյ, եւ բնակէ յամրոցին, որ այժմ Զռղայլ վասն անխեղեղ ամրութեանն գեղչկաբանեն»[48]։ Մեկ այլ կապակցությամբ նա գրում է, որ Վարդան Մամիկոնյանը «...էր ամրացեալ ի Տորոսականն Զռայլ»[49]։ Անշուշտ Զռայլ ամրոցի և Ջերմաձորի կապակցությամբ հիշատակված Տորոսական լեռները սերտ աղերս

---

42 Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց մեծաց, էջ 23, 54։

43 Ռուսական 10-վերստանոց քարտեզ, III—82։

44 Հ. Հյուբշմանն. նշվ. աշխ., էջ 199։

45 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 78։

46 Նույն տեղում, տե՛ս քարտեզը։ Տե՛ս նաև Ս. Տ. Երեմյան. Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298—385 թթ.), քարտեզ, Գ, Դ—3։

47 Ջերմ գետը, որից իր անունն է ստացել Ջերմաձոր գավառը, հիշատակվում է «Աշխարհացույց»-ում, բյուզանդական և արաբական սկզբնաղբյուրներում։ Այսպես՝ «Աշխարհացույց»-ում նրա անունը պահպանվել է Մերմ սխալ գրությամբ, Ագաթիասի մոտ այն կոչվում է Zipμας (Agathias, 4, 29։ Տե՛ս նաև Հ. Հյուբշմանն. նշվ. աշխ., էջ 199), Յակուտալ-Համավին այն կոչում է Վագի ար-Ռազմ կամ Վադի ազ-Զարմ (տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Թ. Նալբանդյան. Երևան, 1965. էջ 69։ Տե՛ս նաև Հ. Հյուբշմանն. նշվ. աշխ., էջ 199)։

48 Թովմա Արծրունի, էջ 81—82։

49 Նույն տեղում, էջ 85։

ունեն «Աշխարհացույցի» հետ։ Թովմա Արծրունու մեկ այլ «Եւ տուեալ Գագկայ Վասպուրական իշխանի զբերդն Ագարակայ, եւ զգաւառն Ճախուկ, առնու զբերդն Զռէլ, եւ զգաւառն կոչեցեալ Ջերմաձոր, որ է մասն երկրին Մոկաց, զի իցէ նորայն սմա մերձաւոր, եւ զորայն նմա յարակից»[50] և Մեսրոպ Երեցի «...ճեպով ընթացեալ (Մուշեղ Մամիկոնյան սպարապետը—Հ. Բ.) ընդ դաւառն Ջերմաձորոյ, առ ոտս ամրոցացն Տմորից և բերդին Ալկոյ»[51] տեղեկությունները էապես հաստատում են Ջերմաձորի տեղադրությունը։ Ղ. Ինճիճյանի կարծիքով Ջերմաձոր գավառը Դզերմադզու գրությամբ հանդիպում է Կոստանդին Միրանածնի մոտ[52]։ Իրականում Կոստանդին Միրանածինը հիշատակում է Ցերմացու բերդի մասին, որին տիրում էր կայսիկ Արու-Սալիմը՝ Ապոսելիմիսը. «Ապոսևատայի և Ապոլեսֆուետի երրորդ եղբայր՝ Ապոսելիմիսը տիրում էր Ցերմացու ամրոցին և նրա շրջակայքին. նա ևս հպատակություն հայտնեց հռոմեացիների կայսեր և, ինչպես իր եղբայր Ապոսևատան և իր երկրորդ եղբայր Ապոլեսֆուետը, հարկ էր վճարում»[53]։ Ավելի ուշ Ղ. Ինճիճյանի կարծիքը պաշտպանել է Ե. Հոնիգմանը[54], սակայն Հ. Մարկվարտը, Մ. Կանարը և Ա. Տեր-Ղևոնդյանը իրավացիորեն ցույց են տվել, որ Ցերմաձոր Ցերմացուն պետք է նույնացնել ոչ թե Ջերմաձորի, այլ Սերմանցի հետ, որը Հարքի հյուսիս-արևմուտքում էր գտնվում[55], քանի որ Ջերմաձորը երբեք չի գտնվել կայսիկների իշխանության ներքո, իսկ Կոստանդին Միրանածնի հիշատակած պատմական իրադարձություններն էլ ծավալվում են Հարքում և նրան շրջակա գավառներում։

Ինչպես ճիշտ տեղադրում է Ս. Երեմյանը, Մոկաց Միջա գավառը գտնվել է Մոկաց Առանձնակ գավառից հարավ-արևմուտք, Մամոտանք կոչված շրջանում, որտեղ մինչև այսօր էլ պահպանվել է Միջա գյուղը[56]։

Մյուս գավառների տեղադրությունը անորոշ է և ամեն մի ենթադրություն այդպես էլ չի հավակնի վերջնական լինելու, մինչև որ ի հայտ չգան նոր մատենագրական և տեղագրական նյութեր։ Ղ. Ինճիճյանը, սկզբնաղբյուրների պակաս զգալով, այդպես էլ չի փորձել տեղադրել մյուս գավառները։ Ղևոնդ Ալիշանը Իշայր, Մյուս Իշայր և Իշոց գավառները տեղադրել է Զրբգան, Սպարկերտ և Կարկառ գավառակների տեղում, Արքայից գավառը և Արգաստովիտը Մոկքի և Շատախի միջև[57]։ Հ. Հյուբշմանը փորձել է բացահայտել Մոկքի նկարագրության աշխարհագրական օրինաչափությունները և

---

50 Նույն տեղում, էջ 314։ Առաքել Դավրիժեցու մոտ Զռելը սխալմամբ հիշվում է Զռել Ձևով (Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ. Վաղարշապատ, 1896, էջ 418)։

51 Ղ. Ալիշան. Հայապատում. Վենետիկ, 1901, էջ 136։

52 Ղ. Ինճիճյան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 135։

53 Կոստանդին Միրանածին.—Բյուզանդական աղբյուրներ, Բ. թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Թարթինյանի. Երևան, 1970, էջ 11 (բնագրում Τζερματζου)։

54 E. Honigmann. Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen. Bruxelles, 1935, p. 147, 197.

55 J. Markwart. Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen. Wien, 1930, S. 305; M. Canard. Les Hamdanides et l'Arménie, Annales de l'Inst. d'études Orient. Alger, 1948, VII, 91, p. 81. Ա. Տեր-Ղևոնդյան. Արաբական ամիրայություններ Բագրատունյաց Հայաստանում. Երևան, 1965, էջ 144։

56 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 70—71։ Տե՛ս նաև Копия турецкой карты Анатолии, изданной в масштабе 1:200000 в 1330 году гиджры, т. е. в 1911—1912 годах, издано в военно-топографическом отделе штаба Кавказского военного округа в 1915 году, V—16 Ван.

57 Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23։

եկել այն եզրակացության, որ նկարագրությունը կատարվել է արևմուտքից դեպի արևելք, քանի որ իրար հաջորդում են Առուենից ձոր, Առանձնակ Մոկք և Ջերմաձոր գավառները և որ Ջերմաձորը Մոկաց ամենաարևելյան գավառն է էր[58]։ Մոկքի բոլոր գավառները տեղադրելու փորձ մինչև այսօր կատարել է միայն Ս. Տ. Երեմյանը, որի կարծիքով Իշայր գավառը համապատասխանել է Մոկսի և Խիզանի միջև գտնվող Շնիձոր գավառակին, որտեղ միջին դարերում հայտնի էր Սուրբ Կանանց վանքը կամ Սուրբ Խաչ վանքը Կեցան գետի ձախ ափին[59], Մյուս Իշայր գավառը համապատասխանել է Խիզանին և ընդգրկել Կեցան գավառակի մեծ մասը[60], Իշոց գավառը՝ Սպարկերտ գավառակին[61], Արգաստովիտը՝ Արևելյան Տիգրիսի ձախափնյա վտակ, ներկայումս Կերկանգիլսու կոչվող գետակի ձորահովտին[62], իսկ Արքայից գավառը, ինչպես վերը նշեցինք, նույնացվել է Մոկք Առանձնակին։

Մեր կարծիքով, Մոկքի գավառների նկարագրությունը կատարվել է հարավից հյուսիս և արևելք։ Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Առուենից կամ Առուանից ձորը զբաղեցնում էր Մոկաց աշխարհի ծայր հյուսիս-արևմուտքը, պետք է ենթադրել, որ Իշայր, Մյուս Իշայր և Իշոց գավառները գտնվում էին Կեցան գետի հովտում։ Բնավ էլ վերջնական տեղադրության հավակնություն չունենալով, մենք կարծում ենք, որ Իշայրի հավանական տեղադրությունը հնարավոր է Կեցան գետի աջափնյա վտակ, ներկայումս Հավկիսշայ կոչվող գետակի հովտում և Կեցան գետի նրան հանդիպակաց ձախափնյա հատվածում։ Եթե այս տեղադրությունը մոտ է իրականին, ապա Մյուս Իշայրը պետք է փնտրել նրանից հյուսիս՝ մինչև Առուենից ձոր ընկած հատվածում, Խիզանի շրջանում։ Ինչ վերաբերում է Իշոց գավառին, ապա աշխարհագրական տեսակետից նրա միակ տեղադրությունը հնարավոր է Կեցան գետի ձախափնյակում, Աղաքիսի (հնում՝ Եղեգիս) և Սպարկերտի ուարածքում։ Հիշյալ գավառների թվարկումից հետո նկարագրությունը կրկին սկսվում է հարավում և շարունակվում դեպի հյուսիս ուղղությամբ։ Միջա գավառին, որի տեղը հայտնի է, հաջորդում է նրանից հյուսիս-արևելք գտնըվող Մոկք Առանձնակ գավառը Որբ կամ Մոկս գետի ձորահովտում։ Կարծում ենք, որ Մոկաց Առանձնակ գավառով ավարտվում է հիշյալ աշխարհի երկրորդ շարքի թվարկումը, ուստի մնացած գավառները պետք է նույն սկզբունքով տեղադրվեին Մոկքի հարավային մասում։ Եթե այդ օրինաչափությունը համապատասխանում է իրականությանը, ապա Արքայից գավառը պետք է փնտրել ոչ թե Մոկքի և Շատախի միջև, ինչպես կարծում է Ղ. Ալիշանը, այլ այն պետք է գտնվեր Արլ. Տիգրիսի կամ Ջերմի ավազանում՝ Ջերմաձոր գավառից արևմուտք ընկած հատվածում։ Հավանաբար հեռավոր անցյալում նա մաս է կազմել Ջերմաձոր գավառի, սակայն արքունական տիրույթ դառնալու հանգամանքը պատճառ է դարձել, որ նա անջատվի վերջինից և վերածվի ինքնուրույն գավառի։ Անշուշտ չի բացառվում, որ արքունական կարող էր լինել նաև Ջերմաձոր գավառը։ Այդ դեպքում Արքայից գավառի անջատումը, ամենայն հավանականությամբ III դարում, որոշաթե ռազմաստրատեգիական նպատակներ է հետապնդել։ Աշխարհագրական տեսակետից միանգամայն ընդունելի է Ս. Տ. Երեմյանի կողմից կատարված Արգաստովտի տեղադրությունը, հետևաբար ստացվում է, որ հարավային շարքում արևմուտքից արևելք և հյուսիս հաջորդականությամբ հիշատակվում են Արքայից գավառը, Արգաստովիտը և Ջերմաձորը։

---

58 Հ. Հյուբշման. նշվ. աշխ., էջ 200—201։

59 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 54։

60 Նույն տեղում, էջ 70։

61 Նույն տեղում, էջ 54։

62 Նույն տեղում, էջ 39։

Մոկքը խիստ լեռնային, անտառապատ աշխարհ է, որտեղ անգամ XX դարի սկզբին բնակչությունը շարունակում էր ապրել ինքնամփոփ կյանքով, որտեղ բեռները մեծ մասամբ տեղափոխում էին ոչ թե գրաստներով, այլ իրենք՝ բնակիչները։ Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ, Մոկքը «...խորափիտ և դժուարաժայռ և ամուր»[63] աշխարհ էր, որի լեռները ծործորաշատ էին[64]։ Ապարանից խաչի ճառում Մոկքը բնութագրվում է որպես «լեռնահոլով և կարծրախարիսխ գաւառ...»[65]։ Խոսելով Մոկքի մասին, Թովմա Արծրունին նշում է, որ «...լերինս բարձրաբերձս եւ փապարս անտառախիտս ունի երկիրն Մոկաց»[66]։

Մոկքի վարչաքաղաքական պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն մտել է Մեծ Հայքի Երվանդունյաց և Արտաշեսյան թագավորությունների մեջ[67]։ Ինչպես վերը ցույց տվեցինք, այն մնաց Մեծ Հայքի թագավորության մեջ III դարում Հայոց թագավորության՝ հօգուտ Պարսկաստանի տարածքային կորուստներից հետո ևս։ Ըստ որում նրա վարչական ձևավորումը III դարում արդեն կատարվել էր։ 363 թ. «ամոթալի հաշտությամբ» հռոմեացիները Մոկքը ղիջեցին Սասանյան Պարսկաստանին, սակայն Պապ թագավորի գահակալության շրջանում հայոց բանակի մի շարք փայլուն հաղթանակները պարսիկների նկատմամբ ի չիք դարձրին հռոմեա-պարսկական հաշտության քաղաքական արդյունքները։ Մեծ Հայքի թագավորության բաժանումից (387 թ.) և անկումից հետո (428 թ.) Մոկքը սկզբում անցավ Արևելահայկական թագավորությանը, որտեղ թագավորում էր Խոսրով IV-ը, իսկ ավելի ուշ մաս կազմեց Հայկական կամ Արմենի մարզպանության։

Մոկաց նախարարության հանդեպ գալը Մովսես Խորենացին կապում է հայոց ավանդական Վաղարշակ թագավորի գործունեության հետ. «Իսկ զՄոկացին ի նոյն գաւառէ գտեալ այր, որ ունէր ընդ իւրեաւ սրիկայս բազումս՝ նախարարութիւն հաստատէ»[68]։ Ատ. Մալխասյանը, ինչպես ճիշտ ցույց է տվել Հ. Գ. Մելքոնյանը[69], սխալ հասկանալով Մովսես Խորենացու հիշյալ հաղորդումը, սույն հատվածը թարգմանել է. «Իսկ Մոկսում գտնելով նույն գավառից մի մարդ, որ ձեռքի տակ ուներ բազմաթիվ ավազակներ, հաստատում է նախարարություն»[70]։ Սակայն ուշադրության արժանի է այն փաստը, որ նա այնքան էլ վստահ չի եղել իր թարգմանության ճշտությանը, ուստի գրել է. «Սրիկա բառը բառարանները բացատրում են իբրև «սուր կրող, ավազակ, գող-ավազակ, դատարկապորտ»։ Այդպես էլ թարգմանում են.—Էմին՝ «большое число разбойников», Ստեփանէ՝ «շատ սրիկաներ»։ Մենք էլ պահպանեցինք այս բառը, թեպետ և կասկածում ենք ճշտության վրա»[71]։ Ստ. Մալխասյանի կասկածը բնավ էլ անհիմն չի եղել և Հ. Գ. Մելքոնյանը, հենվելով ասորերենի բառամթերքի վրա, ցույց է տվել, որ սրիկա-srika նշանակում է «մերկ, դատարկ, պարզ, հոլանի, աղքատ», այսինքն

63 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 292։

64 Նույն տեղում, էջ 270. «...ի ծործորս ամուր լերանցն Մոկաց...»։

65 Գ. Ինճիճյան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 138։

66 Թովմա Արծրունի, էջ 314։

67 Հ. Հյուրշմանը գտնում է, որ եթե Մոկքը Արտաշես I-ի օրոք չի մտել Մեծ Հայքի մեջ, ապա միացվել է Տիգրան Մեծի օրոք (տե՛ս նշվ. աշխ., էջ 84)։

68 Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան. Տփղիս, 1913, էջ 116։

69 Հ. Գ. Մելքոնյան. Ադիաբենի պետությունը և Հայաստանը. Երևան, 1980, էջ 142—148։

70 Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 140։

71 Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց. Երևան, 1940, ծան. 182, էջ 287։

«անզեն», հետևաբար Պատմահոր տեղեկությունը պետք է թարգմանել ներքոհիշյալ ձևով. «Մոկքում գտնելով նույն գավառից մի մարդ, որ ձեռքի տակ ուներ բազմաթիվ մերկեր (անզեններ), նշանակում է նախարար»[72]։ Հարկ է նշել, որ վաղուց ի վեր արմատացել է այն սխալ կարծիքը, որ Մոկաց աշխարհը ամբողջությամբ պատկանել է Մոկացի նախարարությանը[73]։ Սակայն ուշադիր քննությունը բացառում է ամբողջությամբ այդ տեսակետը, որովհետև Արքայից գավառը անկասկած չէր կարող պատկանել Մոկաց ժառանգատեր իշխաններին, իսկ Առուենից կամ Առուանից ձորը ամենայն հավանականությամբ պատկանել է Առավանյան նախարարությանը։ Այլ խոսքով, տարածքային ընդգրկմամբ նրանք նույնական չէին։ Եթե անգամ ընդունենք էլ, որ հետագայում Մոկքը ամբողջությամբ հայտնվեց Մոկաց իշխանների ձեռքում, ստիպված ենք արձանագրելու, որ սկզբնապես Մոկքի որոշ մասերը հանդիսանում էին արքունական կամ այլ նախարարության տիրույթներ։ Պատահական չէ, որ Ռշտունյաց և Մոկացի նախարարական ընտանիքները մարտադաշտ կարող էին դուրս բերել 1000-ական զինվոր, այն դեպքում, երբ Մոկք աշխարհի տարածքը մի քանի անգամ գերազանցում էր Ռշտունիքին։ Եթե անգամ ընդունենք, որ Մոկքը շատ ավելի նոսր էր բնակեցված, քան Ռշտունիքը, այնուամենայնիվ նրա մեծ տարածքը ոչ միայն փոխհատուցում էր այդ պակասը, այլև հնարավորություն ընձեռում անհամեմատ ավելի մեծ ռազմաշոկատ դուրս բերելու։ Ուստի այդ հանգամանքից ելնելով էլ Մոկքը ամբողջությամբ չէր կարող պատկանել Մոկացի նախարարությանը։ Արդեն III դարի վերջին և IV դարի սկզբին Մոկքի իշխանները հանդիսանում էին Մեծ Հայքի թագավորության առավել նշանավոր նախարարներից։ Ագաթանգեղոսը Հռոմ մեկնած Տրդատ Արշակունու թիկնախմբում ի թիվս Անգեղ-տան, Բագրատունյաց, Սյունյաց, Ռշտունյաց և այլ իշխանների, Աղձնյաց և Գուգարաց բդեշխների հիշատակում է նաև Մոկաց իշխանին[74]։ Մոկաց իշխանը հիշատակվում է նաև քահանայապետ օծվելու նպատակով Կապադովկիայի Կեսարիա քաղաքը մեկնած Գրիգոր Լուսավորչի ուղեկիցների թվում[75]։

Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանումից հետո, երբ հայկական մի շարք երկրամասեր պարսից արքունիքը անջատեց Մեծ Հայքի արևելյան մասից, վերածելով առանձին վարչական միավորների կամ կցելով հարևան վարչական շրջաններին, ասորական եկեղեցին, օգտվելով Սասանյանների որոշակի օժանդակությունից, աստիճանաբար իր ազդեցությունը տարածեց հարավային Հայաստանում, այսպես կոչված Անդրտիգրիսյան երկրամասերում։ Թե որքան ուժեղ էր եկեղեցական այդ ներխուժումը, կարելի է եզրակացնել այն փաստից, որ ասորական եկեղեցուն հաջողվեց թեմ ստեղծել անգամ անմիջականորեն Արևելահայկական թագավորության մեջ վարչականորեն մտնող Մոկքում։ Անշուշտ ասորական եկեղեցու հաստատվելը Մոկքում չէր բացառում հայոց եկեղեցու թեմի գոյությունը, սակայն Հայոց թագավորության մեջ վարչականորեն չմտնող երկրամասերում Հայոց եկեղեցին ստիպված էր համառ պայքարից հետո տեղի տալ պետական օժանդակություն վայելող ասորական եկեղեցուն։ Հնարավոր է, որ Մոկքում ասորական եկեղեցու թեմի ստեղծումը զուտ պատմական իրադարձությունների

---

72 Հ. Գ. Մելքոնյան. նշվ. աշխ., էջ 143։

73 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, էջ 299։ Տե՛ս նաև Թ. Հակոբյան. Դիտողություններ VII դարի «Աշխարհացույց»-ի մասին.—Երևանի համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 43, Աշխարհագրական գիտ. սերիա, պրակ 1, Երևան, 1954, էջ 132։ Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 71։ Թ. Խ. Հակոբյան. Հայաստանի պատմական աշխարհագրություն. Երևան, 1968, էջ 245 և այլն։

74 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց. Տփղիս, 1909, էջ 460։

75 Նույն տեղում, էջ 414։

քմահաճ ընթացքի արդյունք էր, 363 թ. «ամոթալի հաշտության» անմիջական արդասիք, սակայն փաստը մնում է փաստ, որ Մոկքում հայոց եկեղեցու եպիսկոպոսության կողքին գոյություն ուներ նաև ասորականը։

IV դարում և V դարի սկզբներին սասանյան արքունիքը աշխատում էր ասորական եկեղեցին օգտագործել քաղաքական նկատառումներով, որպես հռոմեական, իսկ ավելի ուշ՝ բյուզանդական եկեղեցու հակակշիռ։ Կամենալով գրեթե ինքնահոսի թողնված ասորական եկեղեցու գործունեությունը կանոնավորել, ինչպես նաև ուժեղացնել Տիզբոնի եպիսկոպոսության կամ կաթողիկոսության դիրքերը ու այն ներառնել պարսից արքունիքի վերահսկողության ներքո, պարսից Հաղկերտ I արքան թույլ տվեց Իսահակ կաթողիկոսին, որ նա ժողովի հրավիրի բոլոր թեմերի եպիսկոպոսներին[76]։ 410 թ. հունվարի 6-ին ասորական եկեղեցու 40 եպիսկոպոսներ հավաքվում են Տիզբոնում, սակայն ինչ-ինչ պատճառներով ժողովը գումարվում է միայն փետրվարի 1-ին[77]։ Ժողովի արձանագրությունից պարզվում է, որ Տիզբոնի կամ Արևելքի կաթողիկոսությունը բաժանվում էր 6 թեմի, ըստ որում թեմական բաժանումը չնչին բացառությամբ համապատասխանում էր Պարսկաստանի վարչաքաղաքական բաժանմանը[78]։ Ասորական եկեղեցու Մծբնի թեմը բաղկացած էր 5 եպիսկոպոսություններից, որոնք էին՝ Արզնը, Կարդուն, Բեյթ-Զաբդեն, Բեյթ-Ռախիման և Բեյթ-Մոկսան[79], այսինքն Աղձնիքը, Կորդուքը, Ծավդեքը, Ռեհիմենեն և Մոկքը։ 410 թ. Սյունհոդոսի տակ ստորագրել է Բեյթ-Մոկսայի եպիսկոպոս Դանիելը (Bēδ Moksāyē,։

Մոկքը կամ նրա իշխանական տունը հիշատակվում են բազմիցս V դարի ազատագրական պատերազմների ժամանակ[80]։ Մինչև Հայաստանի 591 թ. բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, Մոկքը մաս էր կազմում Հայկական մարզպանության Տանուտիրական գնդի վարչական շրջանի։ Բաժանումից հետո հայկական հողերի մեծ մասն անցավ Բյուզանդիային, իսկ Սասանյաններին ենթակա Հայկական մարզպանությունը, որ նույնական էր Սեպհական կամ Վասպուրական գնդի երկրին, իր մեջ ներառնում էր լոկ Վասպուրականը, Մոկքը, Պարսկահայքի և Կորճայքի որոշ հատվածներ և Դվին քաղաքն իր շրջակայքով[81]։ Աստիճանաբար Վասպուրական աշխարհի գաղափարը մեռնում էր, իր տեղը զիջելով Վասպուրական=Հայկական մարզպանության գաղափարին[82], որի հետևանքով արաբական աղբյուրներում արդեն Մոկքը համարվում է Վասպուրականի մաս։

Անդրադառնալով Մոկք տեղանվանը, գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանը գրել է. «Թե Մոկք նաև երկրին բնակիչները կը ցուցընե՞ր (հմմտ.

---

76 J. B. Chabot. Synodicon Orientalum. Paris, 1902, p. 256։

77 Հ. Գ. Մելքոնյան. նշվ. աշխ., էջ 219։

78 E. Honigmann. et A. Maricq. Recherches sur les Res Gestae Divi Saporjs, 1953, p. 45։ Տե՛ս նաև Հ. Գ. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 219։

79 J. B. Chabot. Op. cit., p. 272։

80 Ղեղիշե, էջ 28, 43, 116։ Ղազար Փարպեցի, էջ 44, 45, 47, 52, 72, 126, 127։

81 Б. А. Арутюнян. Административное деление закавказских владений сасанидского Ирана согласно труду Елишэ.—Кавказ и Византия, вып. I, с. 19—35.

82 Բ. Հ. Հարությունյան. Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի.—«Հանդես Երևանի համալսարանի», 1983, № 3, էջ 137։

Հայք=«Հայաստան» և «Հայեր»), կարելի չէ հաստատել. նմանապես այս անվան *Մոկ եզակին ալ գործածված չի գտնվիր։ Ասկի ածանցված մոկացի բառը գործածե Խոր. 80։ Կսպասվեր որ այս անվան հունարեն-լատ. ձևն ըլլար [illegible] կամ՝ հայ Մոկս հայոցականը հրմ բռնելով՝ *Moxena (հմմտ. ասոր. [illegible] Moksayē որ Corduenā անուան ազդեցութեամբը կրնար *Moxuena ալ եղած ըլլալ։ Ասոր տեղ մեր դիմացը կելլե Moxoena ձևը (x-ե եաքը o-ով մը), որուն ծագումը մթին է»[23]։ Այս հարցերը, որ խիստ հետաքրքիր են լեզվաբանական տեսակետից, սպասում են իրենց հետազոտողին և դուրս են մնում մեր պատմատարածական, տեղագրական քննության շրջանակներից, ուստի և նրանց ուսումնասիրությանը չենք անդրադառնում։

ОБЛАСТЬ МОКК ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО «АШХАРhАЦУЙЦУ» («АРМЯНСКОЙ ГЕОГРАФИИ»)

Б. А. АРУТЮНЯН

Резюме

Среди ашхарhов (областей) Великой Армении Мокк занимает наименьшую территорию. В отличие от других ашхарhов он встречается в первоисточниках, начиная лишь с IV в. На основе «Ашхарhацуйца» и других первоисточников делается попытка доказать, что ашхарhацуйцовская область Мокк административно сложилась в III в., составляя до своего возникновения часть области Алдзник. Рассматриваются проблемы локализации гаваров Мокка, а также ряд вопросов, связанных с исторической географией области.

---

[23] Հ. Հյուբշմանն. նշվ. աշխ., էջ 83—84։